

Քննարկված է

«Չեղարքունիքի տարածաշրջանային  
պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի  
կառավարման խորհրդի  
« 01 » « 11 » 2016 թ. նիստում

Հաստատված է

«Չեղարքունիքի տարածաշրջանային  
պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի  
տնօրենի « 29 » « 12 » 2016 թ.  
թիվ 424 հրամանով



**« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ »**

**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**ՈՒՄԱՆՈՂՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

1. Ուսանողն իրավունք ունի բողոքարկելու՝ գիտելիքների ստուգման ցանկացած բաղադրիչից և ձևից (ընթացիկ ստուգում, կուրսային աշխատանք, պրակտիկա, ամփոփիչ ստուգարք, ամփոփիչ քննություն, ամփոփիչ ատեստավորում) ստացած գնահատականին համաձայն չլինելու դեպքում:

2. Եթե գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացն իրականացվել է գրավոր ձևից (ընթացիկ ստուգում, կուրսային աշխատանք, պրակտիկա, ամփոփիչ ստուգարք, ամփոփիչ քննություն), ապա ուսանողը բողոքարկման դիմումն անձամբ ներկայացնում է տվյալ ամբիոնի վարիչի անունով՝ արդյունքները հրապարակելուց հետո մեկ ժամվա ընթացքում:

2.1. Բողոք-դիմումն ընդունելուց և համապատասխան ձևով գրանցելուց հետո ամբիոնի վարիչն իր նախագահությամբ կամ իր երաշխավորությամբ ձևավորում է բողոքարկման հանձնաժողով, որում պարտադիր ընդգրկվում են ուսումնական գծով փոխտնօրենը, առարկան դասավանդող դասախոսը, ամբիոնի մեկ այլ դասախոս, տվյալ ամբիոնի ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, և նույն օրը ուսանողի ներկայությամբ կազմակերպում գրավոր աշխատանքի քննարկումը :

2.2. Բողոքարկման հանձնաժողովը ստուգում է ուսանողի գրավոր աշխատանքի գնահատման համապատասխանությունը հարցատոմսի հարցերի պատասխաններին և բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կայացնում է որոշում՝ ա) գնահատականը (ստուգարքի արդյունքը) մնում է անփոփոխ, բ) գնահատականը (ստուգարքի արդյունքը) փոփոխվում է (բարձրացվում է կամ իջեցվում):

2.3. Որոշումը ձևակերպվում է համապատասխան արձանագրությամբ, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, անդամների և բողոքարկող ուսանողի կողմից: Կայացված որոշմանն անհամաձայնություն հայտնելու դեպքում ուսանողի կողմից գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:

2.4. Գնահատականի փոփոխման դեպքում քննական/ստուգարքային ուղեգրում կատարվում է համապատասխան գրառում և այն կցվում է խմբային ամփոփագրին: Համապատասխան գրառում է կատարվում նաև ուսանողի ստուգարքային գրքույկում:

3. Եթե գիտելիքների ստուգման և գնահատման գործընթացն իրականացվել է բանավոր, ապա ուսանողը, առանց քննասենյակից դուրս գալու, քննություն անցկացնող դասախոսին խնդրում է հրավիրել տվյալ ամբիոնի վարիչին և անձամբ բողոքարկման դիմում է ներկայացնում նրա անունով: 3.1. Ամբիոնի վարիչը սույն ընթացակարգի թիվ 2.1 կետում նշված կարգով ձևավորում է բողոքարկման հանձնաժողով և տեղում կազմակերպում ուսանողի գիտելիքների ստուգումը տվյալ քննական տոմսի հարցերի շրջանակներում:

3.2. Բողոքարկման հանձնաժողովը բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կայացնում է որոշում սույն ընթացակարգի թիվ 2.2 կետում սահմանված կարգով: Որոշումը ձևակերպվում է համապատասխան արձանագրությամբ՝ համաձայն սույն ընթացակարգի թիվ 2.3 և 2.4 կետերի:

4. Ամփոփիչ ատեստավորումից ստացած գնահատականի բողոքարկումն իրականացվում է ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2011թ. հոկտեմբերի 31-ի թիվ 1197-Ն հրամանով հաստատված <>-ի 33-րդ կետին համապատասխան: Գրավոր բողոքը, արդյունքները հրապարակելուց հետո մեկ ժամվա ընթացքում, ներկայացվում է հանձնաժողովի նախագահին, ով բողոքի քննարկումը կազմակերպում է նույն օրը:

4.1. Գրավոր բողոքի քննարկմանը մասնակցում են քոլեջի վարչակազմի՝ տվյալ հանձնաժողովի ան- դամ չհանդիսացող աշխատակիցը և ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են քոլեջի տնօրենի կողմից:

4.2. Շրջանավարտի ներկայությամբ լսվում է պատասխանի ձայնագրությունը: Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝ ա) գնահատականը թողնել անփոփոխ, բ) գնահատականը բարձրացնել:

4.3. Որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ, որը պարտադիր ստորագրվում է հանձնաժողովի բոլոր անդամների և շրջանավարտի կողմից: Կայացված որոշմանն անհամաձայնություն հայտնելու դեպքում շրջանավարտի կողմից գրավոր

ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը: Հանձնաժողովի որոշումը վերջնական է և փոփոխման ենթակա չէ:

4.4. Գնահատականի փոփոխման դեպքում արձանագրությունների հատուկ մատյանում կատարվում է համապատասխան գրառում:

5. Առանց քննարկման բողոքարկումը մերժվում է, եթե՝ ա/ այն չի բխում սահմանված գիտելիքների ստուգման և գնահատման ընթացակարգային պահանջներից, բ/ ուսանողի կողմից ներկայացվում է չհիմնավորված պատճառաբանություն իր առողջական վիճակի վերաբերյալ:

